

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY  
THE COUNCIL OF EUROPE

**ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA**

**EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS**

**COLLECTION OF JUDGMENTS**

*Edited by Alvina Gyulumyan*

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,  
ՀՀ Դատավորների միության նախագահ  
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

**ԵՐԵՎԱՆ 2002**

**Տպագրվում է ՀՀ Ղատավորների միության  
խորհրդի որոշմամբ**

**Խմբագիր**

**ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ  
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը  
Մարինա Մխիթարյանը  
Կարինե Բալայանը  
Սոնա Հովհաննիսյանը  
Վահե Ենգիբարյանը  
Աննա Ղազարյանը

**ՊԵԼԼԱԴՈԱՆ ԸՆԴՂԵՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾԸ**  
**CASE OF PELLADOAH v. NETHERLANDS**

**Դատարանի 1994թ. օգոստոսի 23-ի  
Վճիռը**

Պելլադոան ընդդեմ Նիդեռլանդների գործով,  
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նիստ գումարելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Դատարանի կանոնակարգի համապատասխան դրույթների հիման վրա՝ որպես Պալատ, դատավորների հետևյալ կազմով՝ պրն Ռ. Ռիսդալ, Նախագահ, պրն Ֆ. Մատչեր, պրն Բ. Ուոլշ, պրն Ս.Կ. Մարտենս, պրն Ռ. Պեկանեն, պրն Ջ. Ս. Սորինելա, պրն Ա.Բ. Բակա, պրն Գ. Սիֆսուդ Բոնիչի, պրն Ջ. Մակարչիկ, նաև պրն Ս.-Ա. Էյսեն, Քարտուղար, և պրն Դ. Պետցուլդ, Քարտուղարի տեղակալ,  
1994թ. մարտի 25-ի և օգոստոսի 23-ի դռնփակ խորհրդակցություններից հետո ընդունեց հետևյալ վճիռը:

**ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը Դատարան է հանձնել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը ( «Հանձնաժողով» )՝ 1993թ. հուլիսի 12-ին և Նիդեռլանդների Թագավորության կառավարությունը («Կառավարություն»)՝ օգոստոսի 30-ին, Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետի և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում: Գործի համար առիթ է հանդիսացել 1990թ. ապրիլի 17-ին Մաուրիթիայի քաղաքացի պրն Սաթյանունդ Պելլադոայի կողմից ընդդեմ Նիդեռլանդների Հանձնաժողով ներկայացված զանգատը (թիվ 1672/90):

Հանձնաժողովի առաջարկը հիմնված էր 44 և 48-րդ հոդվածների և այն հայտարարության վրա, որով Նիդեռլանդները ճանաչել է Դատարանի պարտադիր իրավագործությունը (46-րդ հոդված): Կառավարության զանգատը վերաբերում էր միայն 44 և 48-րդ հոդվածներին: Առաջարկի և զանգատի առարկան էր՝ ընդունել որոշում՝ թե արդյո՞ք գործի փաստերը վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3(c) կետերով նախատեսված իր պարտավորությունների խախտման մասին:

2. Ի պատասխան Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 3(d) կետի համաձայն արված հարցման, դիմողը պնդել է, որ ցանկանում է մասնակցել դատավարությանը և նշանակել է իրեն ներկայացնող փաստաբանին (կանոն 30):

3. 1993թ. օգոստոսի 23-ին Դատարանի նախագահը 21-րդ կանոնի 6-րդ կետի համաձայն և ի շահ արդարության պատշաճ իրականացման որոշել է՝ որ պետք է կազմավորել մեկ միասնական Պալատ՝ և՛ սույն, և՛ Լալան ընդդեմ Նիդեռլանդների (25/1993/420/499) գործերը քննելու նպատակով:

4. Այս նպատակով կազմավորված Պալատի կազմի մեջ ընդգրկված էին ex officio Նիդեռլանդներից ընտրված դատավոր պրն Ս.Կ. Մարտենսը

(Կոնվենցիայի 43-րդ հոդված) և Ղատարանի նախագահ պրն Ռ. Ռիսդալը (21-րդ կանոնի 3(b) կետ): 1993թ. օգոստոսի 25-ին, Քարտուղարի ներկայությամբ, Նախագահը վիճակահանությամբ որոշել է Պալատի մյուս 7 անդամներին՝ պրն Ֆ. Մատչերին, պրն Բ. Ուոլշին, պրն Ս.Կ. Մարտենսին, պրն Ռ. Պեկանենին, պրն Ջ. Ս. Մորինելային, պրն Ա.Բ. Բակային, պրն Գ. Միֆսուդ Բոնիչիին և պրն Ջ. Մակարչիկին (Կոնվենցիայի 43-րդ հոդված in fine և 21-րդ կանոնի 4-րդ կետ):

5. Որպես Պալատի նախագահ (21-րդ կանոնի 5-րդ կետ)՝ պրն Ռիսդալը, գործելով Քարտուղարի միջոցով, դատաքննությունը կազմակերպելու վերաբերյալ խորհրդակցել է Կառավարության ներկայացուցչի, դիմողի փաստաբանի և Հանձնաժողովի պատվիրակի հետ (37-րդ կանոնի 1-ին կետ և 38-րդ կանոն): Արդյունքում, արված կարգադրության համաձայն Քարտուղարը Կառավարության գրավոր բացատրությունը 1993թ. նոյեմբերի 26-ին, իսկ դիմողի գրավոր բացատրությունն ստացել է 1993թ. նոյեմբերի 30-ին: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրել է, որ Հանձնաժողովի պատվիրակը կարող է իր դիտողությունները ներկայացնել դատաքննության ընթացքում:

6. 1993թ. դեկտեմբերի 3-ին Հանձնաժողովը ներկայացրել է Հանձնաժողովում գործի քննության վերաբերյալ որոշ փաստաթղթեր, որոնք խնդրել էր Քարտուղարը՝ Նախագահի հրահանգով:

7. Նախագահի որոշման համաձայն՝ դռնբաց միստը տեղի է ունեցել Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1994թ. մարտի 22-ին: Ղատարանը նախապես անց է կացրել նախապատրաստական հանդիպում:

Դատարանի առջև հանդես են եկել՝

ա) Կառավարության անունից՝

պրն Վ. դը Վեյ Մեսդագը, Արտաքին գործերի նախարարությունից,

ներկայացուցիչ,

պրն Ի.Ս. Աբելը, Արդարադատության նախարարությունից,

պրն Մ.Ջ.Տ.Ս. Վիջգենը, Արդարադատության նախարարությունից,

խորհրդակազմներ,

բ) Հանձնաժողովի անունից՝

պրն Հ.Գ. Շերմեսը,

ներկայացուցիչ,

գ) դիմողի անունից՝

պրն Վ. Կրաալը, advocat en procureur,

փաստաբան:

Դատարանը լսել է պրն Վ. դը Վեյ Մեսդագի, պրն Շերմեսի և պրն Կրաալի ելույթները, ինչպես նաև Դատարանի անդամների հարցերին տրված պատասխանները:

#### ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

##### 1. Գործի մանրամասն հանգամանքները

8. Պրն Սատյանունդ Պելադոան Մաուրիթիայի քաղաքացի է, ծնվ. 1947թ. և բնակվում է Քվատր Բորնսում, Մաուրիթիա:

9. 1985թ. դեկտեմբերի 27-ին պրն Պելադոան ձերբակալվել է Շիփոլ օդանավակայանում այն բանից հետո, երբ մաքսատան աշխատակիցները հայտնաբերել են ավելի քան քսան կիլոգրամ (20 կգ) հերոին, որի որոշ մասը

խառնված էր մետաքսալուծի (սինթետիկ հոգեմետ թմրանյութ) հետ այն ճամպրուկում, որը նա կրում էր:

Նրա դեմ նախնական մեղադրանք է հարուցվել այն բանի համար, որ հանցավոր դիտավորությամբ կամ առանց դրա, ինչպես գործով կարգվի, երկիր է ներկրել հերոին պարունակող նյութի քանակություն: Սա համարվում է երդվյալների դատարանին ընդդատյա հանցագործություն (misdrijf), որի համար նախատեսվում է առավելագույն պատիժ՝ 12 տարի ազատազրկում (gevangenisstraf) և 100,000 NLG տուգանք, եթե կատարվում է հանցավոր դիտավորությամբ (opzettelijk- Օպիումի մասին օրենքի (Opiumwet) մաս 2 (1) (A) և մաս 10 (4)), իսկ եթե կատարվել է առանց այդպիսի դիտավորության, ապա համարվում է երդվյալների դատարանին ոչ ընդդատյա հանցագործություն (overtreding), որի համար նախատեսվում է պատիժ՝ առավելագույնը 6 ամիս ազատազրկում (hechtenis) և 25000 NLG տուգանք, (Օպիումի մասին օրենքի մաս 2 (1) (A) և մաս 10 (4): Որպես այլընտրանք՝ նա մեղադրվել է իր մոտ այդպիսի նյութ պահելու համար (aanwezig hebben), հանցավոր դիտավորությամբ կամ առանց դրա, ինչպես որ կարգվի, որը երդվյալների դատարանին ընդդատյա հանցագործություն է՝ 4 տարի ազատազրկման առավելագույն պատժաչափով և 100000 NLG տուգանքով, եթե կատարվում է հանցավոր դիտավորությամբ (Օպիումի մասին օրենքի մաս 2 (1) (C) և մաս 10 (2)), իսկ եթե բացակայում է հանցավոր դիտավորությունը, ապա երդվյալների դատարանին ոչ ընդդատյա հանցագործություն է, որը նախատեսում է առավելագույնը 6 ամիս ազատազրկում և տուգանք՝ 25000 NLG չափով, (Օպիումի մասին օրենք՝ մաս 2 (1) (C) և մաս 10 (1):

10. 1986թ. օգոստոսի 14-ին պրն Պելադոայի գործը քննել է Յարլենի շրջանային դատարանը (arrondissementsrechtbank). Նա ընդունել է՝ «որ ճամպրուկը վերցրել է ճամպրուկների փոխադրման հարահոսից ... [ որը, երբ ստուգվել է մաքսատանը ], պարզվել է, որ պարունակում է ինչ-որ նյութի մեծ քանակություն, որը, ինչպես պարզվել է հետազայում, հերոին է»:

11. Շրջանային դատարանը դատավճիռ է կայացրել 1986թ. օգոստոսի 21-ին՝ պրն Պելադոային արդարացնելով հանցավոր դիտավորությամբ հերոինի քանակություն երկիր ներմուծելու մեղադրանքի մասով, սակայն նրան մեղավոր է ճանաչել նույն արարքն առանց հանցավոր դիտավորության կատարելու մեջ: Նա դատապարտվել է 6 ամիս ազատազրկման: Նույն վճռով կարգադրվել է նրան անմիջապես ազատ արձակել, քանի որ նա այդ ժամանակահատվածն արդեն անցկացրել էր նախնական կալանքի տակ:

12. Ե՛վ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերը Շրջանային դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել Ամստերդամի վերաքննիչ դատարան: Օտարերկրացիների մասին օրենքի համաձայն (Vreemdelingenwet) դիմողին վտարել են Նիդեռլանդներից՝ մինչև բողոքների քննությունը:

13. Ամստերդամի վերաքննիչ դատարանում գործի վերաբերյալ նիստը տեղի է ունեցել 1987թ. փետրվարի 10-ին: Նիստի պաշտոնական արձանագրությունը հավաստում է, որ պրն Պելադոան հայտարարվել է բացակա, և այն բովանդակում է հետևյալ պարբերությունը.

«Պրն Կ.-ն [պրն Պելադոայի դատապաշտպանը] հայտարարում է, -ըստ էության, ...ես խնդրում եմ դատարանին թույլ տալ ինձ իրականացնել պաշտպանությունը, քանի որ իմ պաշտպանյալը, իր բնակության վայրից ի վիճակի չէ ներկայանալ նիստին»:

Վերաքննիչ դատարանը մերժել է այս խնդրանքը, քանի որ «ոչ մի համոզիչ պատճառ (klemmende reden) չի եղել» այն թույլատրելու համար:

Լսել են վկաներին, մեղադրող կողմին թույլատրվել է հարցաքննել նրանց, իսկ պրն Պելադոյի դատապաշտպանին՝ ոչ:

14. Վերաքննիչ դատարանը դատավճիռ է կայացրել 1987թ. փետրվարի 24-ին: Նկատի ունենալով այն տեղեկությունը, որ թմրանյութերի առևտրի վերաբերյալ խորացված հետաքննությունն ընթացքի մեջ էր Սաուրիթիայում, որի ընթացքում պրն Պելադոյան վկայություններ է տվել Սաուրիթիայի իշխանություններին, Վերաքննիչ դատարանը վճռել է, որ գործը լիովին ուսումնասիրված չի եղել, և կարգադրել է գործի կրկնական քննություն: Պրն Պելադոյային ուղարկվել է նոր ծանուցագիր՝ դատարան ներկայանալու համար:

15. Վերաքննիչ դատարանի՝ այդ գործով երկրորդ նիստը տեղի է ունեցել 1987թ. նոյեմբերի 20-ին: Քանի որ երեք դատավորներից երկուսը ներկա չեն եղել առաջին նիստին, գործի քննությունը սկսվել է սկզբից:

Այս անգամ պրն Պելադոյի դատապաշտպանը թույլտվություն է խնդրել ներկայացնել իր պաշտպանյալին՝ Քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ բաժնին համապատասխան (Wetboek van Strafvordering, CCP – տե՛ս ստորև՝ կետ 23), որը վերաբերում է այլընտրանքային մեղադրանքին:

Այս խնդրանքը մերժվել է, որովհետև «չի հաստատվել, ինչպես նաև պարզ չի եղել, որ [դատապաշտպանը] մեղադրյալի կողմից հատկապես լիազորվել է ներկայացնելու իրեն. ավելին, նախնական մեղադրանքը, որի համար ներկայացուցչությունը թույլատրված չի եղել, պետք է քննության առնվի առաջին անգամ»:

Վկաներից մեկը, որը հարցաքննվել էր նախորդ նիստում, նորից է հարցաքննվել. մեղադրող կողմին հնարավորություն է տրվել հարցաքննել նրան և դիտողություններ անել նրա վկայությունների վերաբերյալ, իսկ պրն Պելադոյի դատապաշտպանին այդ հնարավորությունը կրկին չի ընձեռվել:

Մեղադրող կողմը միջնորդել է պրն Պելադոյային դատապարտել 12 տարի ազատազրկման:

16. Վերաքննիչ դատարանն այնուհետև նիստը հետաձգել է մինչև 1988թ. հունվարի 22-ը, որպեսզի մեղադրանքի կողմը հնարավորություն ունենա հուլանդերեն թարգմանել մատուրիթյան իշխանությունների զեկույցի՝ գործին առնչվող հատվածները:

17. Դատաքննությունը շարունակվել է 1988թ. հունվարի 22-ին: Փաստաբանը թույլտվություն է խնդրել պրն Պելադոյային ներկայացնել դատաքննության ժամանակ և ներկայացրել է դրա համար իրեն լիազորող գրավոր հայտարարություն:

Վերաքննիչ դատարանը կրկին մերժել է բավարարել փաստաբանի խնդրանքը՝ այն պատճառաբանությամբ, որ «նախնական մեղադրանքը, որը նախատեսում է ազատազրկման դատապարտում և որի համար համապատասխանաբար ներկայացուցչությունը թույլատրված չ[էր], պետք է քննվի առաջին անգամ»:

18. 1988թ. փետրվարի 5-ին Վերաքննիչ դատարանը դատավճիռ է կայացրել մեղադրյալի բացակայությամբ: Պրն Պելադոյան մեղավոր է ճանաչվել նախնական մեղադրանքով, այն է՝ արարքը կատարված է եղել հանցավոր դիտավորությամբ, և դատապարտվել է 9 տարվա ազատազրկման: Այս դատավճռի համաձայն այն հիմնվել է «արարքի և այն հանգամանքների լրջության վրա, որոնցում այն կատարվել է, ինչպես նաև մեղադրվողի անձնական հանգամանքների վրա». շեշտադրվել է կատարվել երկիր ներմուծված հերոին պարունակող նյութի քանակությունը և նշվել է, որ պրն Պելադոյան ապօրինի կերպով օգտագործել է իր դիվանագիտական անձնագիրը:

19. Իր դատապաշտպանի միջոցով պրն Պելադոան իրավունքի հարցերով բողոք է ներկայացրել Գերագույն դատարան (Hoge Raad):

Իր բողոքի հիմքում (cassatiemiddelen) նա հիմնականում նշել է հետևյալը. առաջին, որ 1987թ. փետրվարի 10-ին Վերաքննիչ դատարանն իր առաջին նիստում սխալ է թույլ տվել՝ դիմողի չներկայանալու պատճառը, այն է՝ Մաուրիթիայից Նիդեռլանդներ մեկնելու դժվարությունն ու ծախսերը, չհամարելով բավականաչափ «համոզիչ», և երկրորդ, որ դատապաշտպանի ներկայությունը պետք է թույլատրվեր, որովհետև նույնիսկ եթե հանցավոր դիտավորությունն ապացուցվեր, նախնական մեղադրանքը չէր վերաբերում երդվյալների դատարանին ընդդատյա հանցագործությանը, որը նախատեսում է ազատազրկման դատապարտում:

20. Գերագույն դատարանը դատավճիռ է կայացրել 1989թ. հոկտեմբերի 24-ին:

Ինչ վերաբերում է դիմողի առաջին բողոքին, նա նշում է, որ 1987թ. նոյեմբերի 20-ին Վերաքննիչ դատարանի մեկ այլ պալատ սկսել է գործի բուրոյովին նոր քննություն, և որ նշված դատարանի դատավճիռն այդ իսկ պատճառով հիմնված չի եղել 1987թ. փետրվարի 10-ի նիստի եզրահանգման վրա: Այն որոշել է, որ այս նիստում խնդրանքի մերժման վերաբերյալ բողոքը, հետևաբար, չի կարող հանգեցնել այդ դատավճռի վերացման:

Այն նաև մերժել է դիմողի երկրորդ բողոքը՝ մեջբերելով իրավական այն դրույթը, որի համաձայն՝ հանցավոր դիտավորության դեպքում նախնական մեղադրանքը հանդիսանում է երդվյալների դատարանին ընդդատյա հանցագործություն, որի համար նախատեսվում է ազատազրկում:

I. Գործին առնչվող ներպետական օրենսդրությունը և պրակտիկան

Ա. Դատավարությունը դատապարտյալի բացակայության դեպքում (trial in absentia)

21. Ընդհանուր առմամբ, մեղադրյալը, եթե նա անչափահաս չէ (Քրեական դատավարության օրենսգրքի 500-րդ բաժին), պարտադրված չէ ներկայանալու դատական նիստերին:

Դատարանն իր իսկ նախաձեռնությամբ պետք է քննի ծանուցումների վավերականությունը (geldigheid der dagvaarding- CCP, 348-րդ բաժին): Եթե, չնայած պատշաճորեն ծանուցված լինելու հանգամանքին, մեղադրյալը չի ներկայանում նիստին, դատարանը նրան հայտարարում է բացակա (verstek verlenen) և շարունակում է գործի քննությունը նրա բացակայությամբ: Սա է կանոնը, նույնիսկ եթե մեղադրյալը նախապես զգուշացնում է իր բացակայության մասին և խնդրում, որպեսզի լսումը հետաձգվի (տես, inter alia, Գերագույն դատարանի 1985թ. փետրվարի 25-ի վճիռը, NJ (Nederlandse Jurisprudentia, Նիդեռլանդների իրավական տեղեկագիր) 1985, 567) կամ իր պաշտպանությունն իրականացնում է գրավոր (տես Գերագույն դատարանի 1990թ. հոկտեմբերի 9-ի վճիռը, NJ 1991, 133), և նույնիսկ եթե բացակայությունը մեղադրյալի մեղքով չէ (տես, inter alia, Գերագույն դատարանի 1977թ. դեկտեմբերի 20-ի, NJ 1978, 226 և 1990թ. հոկտեմբերի 9-ի, NJ 1990, 293, վճիռները): Դատարանն իրավասու է կարգադրելու, որպեսզի մեղադրյալը ներկայանա կամ դատակոչվի ոստիկանության միջոցով (CCP, 272-րդ բաժին), բայց այդ ձևը հազվադեպ է կիրառվում, բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալն անչափահաս է:

22. Մեղադրյալը, որն իր բացակայությամբ դատապարտվել է առաջին ատյանի դատարանում, կարող է առարկություն ներկայացնել (verzet – CCC 399(1) բաժին). սա սովորական իրավական պաշտպանության միջոց է Նիդեռլանդների իրավունքում: Այսպիսի առարկությունը մեղադրյալին

վերապահուն է նույն դատարանի կողմից ամբողջությամբ դատական գործի կրկին քննության իրավունք (CCP, 403-րդ բաժին):

Առարկություն չի կարող ներկայացվել այն մեղադրյալի կողմից, ով ունի կամ ունեցել է հնարավորություն՝ բողոքարկելու էլ ավելի վերին ատյաններին, որոնք ունեն փաստի և իրավունքի հարցերով իրավագործություն (hoger beroep-CCP, 399(2) բաժին): Սա նշանակում է, որ առարկության հնարավորությունը սահմանափակվում է այն դեպքերով, որոնցով օրենքը չի թույլատրում նման բողոքի ներկայացումը, այն է՝ երբ դատապարտումը ավելի լուրջ չէ, քան փոքր տուգանքը, կամ երբ առաջին ատյանի կարգով շրջանային դատարանը քննության է առել երդվյալների դատարանին ոչ ընդդատյա հանցագործություն:

CCP-ի 399(2) բաժնից հետևում է, որ առարկություն չի կարող ներկայացվել վերաքննության կարգով՝ ամբաստանյալի բացակայությամբ ընդունված դատավճռի դեմ:

Բ. Պաշտպանության իրավունքները մեղադրյալի բացակայության դեպքում

1. Ներկայացուցչությունը

23. Որոշ դեպքերում մեղադրյալը կարող է ներկայացվել իր բացակայության պարագայում: Այն գործերի համար, որոնք առաջին ատյանի կարգով քննվում են Շրջանային դատարանի կողմից, այս հնարավորությունն առկա է, եթե մեղսագրվող հանցանքը չի նախատեսում ազատագրվում: Այնուամենայնիվ, ներկայացուցիչը պետք է լինի իրավաբան, որը պետք է ապացուցի, որ հատկապես իրավասու է գործել որպես այդպիսին (bepaaldelijk daartoe gevolmachtigd- CCP, 270-րդ բաժին):

Նիստին ներկայացուցչի դատավարական կարգավիճակն այնպիսին է, ինչպիսին որ մեղադրյալինն է, այն է՝ եթե նույնիսկ ներկայացուցիչն իրավաբան է, այլ ոչ դատապաշտպան (տես, *inter alia*, Գերագույն դատարանի 1989թ. ապրիլի 25-ի վճիռը, NJ 1990, 91): Սա նշանակում է, որ ինչպես մեղադրյալը, նա կարող է ենթարկվել խաչաձև հարցաքննության դատարանի և մեղադրողի կողմից, և նրա վկայությունները կարող են օգտագործվել որպես ապացույց (տես Գերագույն դատարանի 1951թ. փետրվարի 13-ի վճիռը, NJ 1951, 476). նրան կարող է աջակցել նաև իրավաբան՝ որպես խորհրդատու: Եթե ներկայացուցչությունը թույլատրվում է առաջին ատյանի դատարանում՝ շրջանային դատարանում, այն թույլատրվում է նաև Վերաքննիչ դատարանում (CCP- 415-րդ բաժին):

2. Պաշտպանության իրականացումը

24. Վիճելի հարցը, թե արդյո՞ք բացակա հայտարարված մեղադրյալը կարող է լիազորել, որ իր պաշտպանությունն իրականացնի դատապաշտպանը, որոշվել է Գերագույն դատարանի՝ 1971թ. նոյեմբերի 23-ի դատավճռով (NJ 1972, 293): Չնայած Գլխավոր դատախազը (*procureur-generaal*) առաջարկել էր հաստատական պատասխան, Գերագույն դատարանը հանգել է հակառակ եզրակացության: Դատարանը պատճառաբանել է, որ եթե նման լիազորությունը ճանաչվեր, մեղադրյալի բացակայությամբ տեղի ունեցած դատաքննությունը (*trial in absentia*) կստանար մրցակցային բնույթ, ինչը հակասում է Քրեական դատավարության օրենսգրքի այն հիմնարար գաղափարին, որ բացակա հայտարարված և դատապարտված ամբաստանյալը կարող է միշտ առարկություն ներկայացնել, եթե գտնում է, որ ինքը չէր դատապարտվի, եթե դատարանը լսեր իր պաշտպանությունը: Գերագույն դատարանն այնուհետև գտել է, որ իրոք, Քրեական

դատավարության օրենսգրքի ընդունումից հետո առարկություն ներկայացնելու իրավունքը զգալիորեն նեղացել է, բայց նշել է, որ այդ կերպ վարվելով՝ օրենսդրությունը չի փոխել մեղադրյալի բացակայությամբ դատավարության բնույթը: Հետևաբար, չկա Քրեական դատավարության օրենսգրքի ոչ մի բաժին, ոչ էլ չգրված օրենքի որևէ սկզբունք, որը թույլ տա բացակա հայտարարված մեղադրյալին, որ նրա պաշտպանությունն իր բացակայության ժամանակ իրականացնի դատապաշտպանը:

25. Գերագույն դատարանը, այնուամենայնիվ, ընդունել է, որ գործը քննող դատարանը կարող է իր հայեցողությամբ թույլատրել փաստաբանին հանդես գալու ի պաշտպանություն բացակա հայտարարված մեղադրյալի: Այս հայեցողությունը բավական հաճախ օգտագործվում է: Գերագույն դատարանը խստորեն պահպանում է այն կանոնը, որ եթե նման դեպքերում դատարանը թույլ է տալիս փաստաբանին ընդհանրապես խոսել, ապա այն պետք է նրան տրամադրի պաշտպանությանը վերապահված բոլոր իրավունքները: Այն չի կարող որևէ սահմանափակում կիրառել քննարկվելիք հարցերի նկատմամբ (1987թ. մայիսի 19-ի վճիռը, NJ 1988, 217), չի կարող մերժել նրա՝ վերջինը խոսելու իրավունքը (1988թ. մարտի 22-ի վճիռը, NJ 1989, 13), եթե կան վկաներ, դատապաշտպանին պետք է թույլատրվի խաչաձև հարցաքննություն իրականացնել (1991թ. մայիսի 28-ի վճիռը, NJ 1991, 729):

26. Սկզբունքորեն Գերագույն դատարանը վճռել է (տես վերը՝ կետ 24), որ բացակա հայտարարված մեղադրյալն իրավունք չունի դատապաշտպանին լիազորելու՝ իրականացնել իր պաշտպանությունը, բայց 1980թ. փետրվարի 26-ի վճռից ի վեր (NJ 1980, 246) դատարանն իր նախադեպային իրավունքում մեկ բացառություն է սահմանել. այդ վճռով, դատարանը որոշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիման վրա, *inter alia*, դատական ատյանը պարտավոր է թույլատրել դատապաշտպանին իրականացնել այն մեղադրյալի պաշտպանությունը, որը բացակա է հայտարարվել, եթե դատարանն այն կարծիքին է, որ մեղադրյալի՝ նիստին ներկայանալուն խոչընդոտել են «պարտադրող պատճառներ» և դատարանը որևէ պատճառ չի տեսնում գործի քննությունը հետաձգելու համար: Գերագույն դատարանը ընդունել է այն եզրահանգումը, որ դատապաշտպանին ամեն դեպքում, եթե նա խնդրում է, հնարավորություն պետք է տրվի փաստարկել, որ այդպիսի պատճառներ գոյություն ունեն (1989թ. հոկտեմբերի 10-ի, NJ 1990, 293 և 1989թ. դեկտեմբերի 19-ի, NJ 1990, 407, վճիռները):

27. Գերագույն դատարանն իր 1988թ. փետրվարի 16-ի վճռում (NJ 1988, 794) վճռել է, որ «հիմնավոր պատճառ» գոյություն ունի ոչ միայն այն դեպքում, երբ մեղադրյալն անկարող է ներկայանալ, այլ նաև՝ եթե վտանգված է մեղադրյալի այնպիսի կարևոր շահը, նկատի ունենալով գործին առնչվող բոլոր հանգամանքները, որ ողջամտորեն չի կարելի ակնկալել նրա ներկայությունը դատաքննությանը, և, հետևապես նա կարող է ակնկալել, որ կամ իր դատաքննությունը կհետաձգվի՝ մինչև որ հնարավորություն կունենա ներկայանալու, կամ որ իր դատապաշտպանին կթույլատրվի իրականացնել պաշտպանությունը:

1993թ. նոյեմբերի 30-ի իր վճռում, DD (*Delikt en Delinkwent*, հանցանք և հանցագործ) 94.147.Bijl. NJB (նախադեպային իրավունքի հավելված *Nederlands Juristenblad*, Նիդեռլանդական իրավունքի տեղեկագիր, 1994թ. հունվարի 14, թիվ 2, էջ 17), Գերագույն դատարանը ընդունում է, որ Օտարերկրացիների մասին օրենքի համաձայն մեղադրյալի արտաքսումը, ընդհանուր առմամբ, կարող է համարվել «հիմնավոր պատճառ» դատավարությունից նրա բացակայության համար:

28. Եթե դատապաշտպանը ցանկանում է պաշտպանությունն իրականացնել իր պաշտպանյալի բացակայությամբ, նա պետք է հատկապես դիմի այդպիսի թույլտվության համար: Միայն նրա ներկայությունը բավարար չէ (տես, inter alia, Գերագույն դատարանի 1986թ. նոյեմբերի 14-ի, NJ 1987, 86. 1986թ. նոյեմբերի 25-ի, NJ 1987, 686. 1987թ. դեկտեմբերի 8-ի, NJ 1988, 704. 1989թ. սեպտեմբերի 18-ի, NJ 1990, 145. 1993թ. դեկտեմբերի 14-ի, DD 94.166 վճիռները): Ինչպես նաև բավարար չէ լսումը հետաձգելու մասին դատապաշտպանի պահանջը, ինչպես որ տեղ էր գտել, inter alia, Գերագույն դատարանի 1993թ. դեկտեմբերի 21-ի վճռում, DD 94.176:

#### ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

29. Պրն Պելադոան դիմել է Հանձնաժողովին 1990թ. ապրիլի 17-ին: Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3(c) կետերի վրա, նա վիճարկել է, որ իր դատավարությունն արդար չի եղել, քանի որ Վերաքննիչ դատարանը չի լսել իր դատապաշտպանին:

30. Հանձնաժողովը գանգատը (թիվ 16737/90) ընդունելի է հայտարարել 1993թ. հունվարի 11-ին: 1993թ. մայիսի 4-ի իր գեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովը միաձայն կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3(c) կետի հետ համատեղ:

#### ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

31. Գրավոր բացատրության մեջ Կառավարությունը եզրակացրել է, որ պրն Պելադոայի գործում «չկա [չի եղել] ... ոչ մի հարց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(c) կետի կամ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման առումով»:

#### ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

##### I. 6-րդ հոդվածի 1-ին և 3(c) կետերի վիճարկվող խախտում

32. Պրն Պելադոան գանգատվել է, որ Ամստերդամի Վերաքննիչ դատարանում իր գանգատի քննության ընթացքում իր դատապաշտպանին չի թույլատրվել պաշտպանությունն իրականացնել իր բացակայությամբ: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3(c) կետերի վրա, որը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր ոք, երբ ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք[ը], ունի ... անկախ ու անաչառ դատարանի կողմից ... արդար դատաքննության իրավունք:...

...  
3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

...  
(c)պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով...»:

Կառավարությունը մերժել է այս պնդումը, բայց Հանձնաժողովն ընդունել է այն:

33. Քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները պետք է դիտել որպես 1-ին կետով երաշխավորված արդարացի դատաքննության իրավունքի մասնավոր ասպեկտներ, Դատարանը գանգատները պետք է քննի երկու դրույթների հիման վրա՝ միասին վերցրած (տես, որպես վերջին աղբյուր, Պոյտրիմոլն ընդդեմ Ֆրանսիայի 1993թ. նոյեմբերի 23-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 277-A, էջ 13, կետ 29):

34. Իր զեկույցում Հանձնաժողովը գտել է, որ իրավաբանական օգնության միջոցով իր պաշտպանության իրավունքը չի կարող օգտագործվել միայն այն մեղադրյալների կողմից, ովքեր ներկա են իրենց դատավարությանը: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովն այն կարծիքին էր, որ Նիդեռլանդների իրավունքում ընդունված դիրքորոշումը, այն է՝ որ այն մեղադրյալը, ով անձամբ չի ներկայանում իր դատավարությանը, կորցնում է դատապաշտպանի միջոցով իրեն պաշտպանելու իրավունքը, անհամատեղելի է այն հիմնարար երաշխիքների հետ, որոնք ունի քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք: Դատավարությանը մեղադրյալի ներկայությունն ապահովելու անհրաժեշտությունը չի կարող, Հանձնաժողովի կարծիքով, արդարացնել նրա դեմ կայացված դատավճռի հիմքում ընկած վարույթը՝ առանց լսելու իր դատապաշտպանի միջոցով ներկայացվելիք պաշտպանությունը:

Դատարանի լսումների ընթացքում Հանձնաժողովի պատվիրակը շեշտել է, որ 6-րդ հոդվածում ամրագրված՝ մրցակցության միջոցների հավասարության սկզբունքը պահանջում է, որ պաշտպանության փաստարկները լսվեն, որքանով որ հնարավոր է, ի լրումն մեղադրող կողմի փաստարկների: Ընդունելով դատավարությանը մեղադրյալի ներկայության կարևորությունը, ինչը Պոյտրինգի վերոհիշյալ վճռում Դատարանի արտահայտած կարծիքն էր (նույն տեղում, էջ 15, կետ 35), նա անընդունելի է համարել, որ «մարդու իրավունքների ոտնահարման» վտանգը պետք է օգտագործվի՝ մեղադրյալին ներկայանալուն հարկադրելու համար:

35. Դիմողը համաձայնել է Հանձնաժողովի հետ: Ի լրումն՝ նա նշել է, որ Նիդեռլանդների իրավունքի ոչ մի դրույթ չի կարող խոչընդոտել դատապաշտպանին՝ պաշտպանությունն իրականացնելու մեղադրյալի բացակայությամբ: Նա հարց է բարձրացրել, թե իր բնակության վայրը՝ Մաուրիթիուսը, արդյո՞ք չի կարող համարվել բավարար «պարտադրող պատճառ» Գերագույն դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում: Նա նաև կարծիք է հայտնել, որ, ամեն դեպքում, իրեն իր պաշտպանության իրավունքից զրկելը չհիմնավորված անհամաչափ միջոց է:

36. Կառավարությունը նախ և առաջ պնդել է, որ 1987թ. փետրվարի 24-ին, երբ հետաձգումից հետո վերսկսվել էր դատավարությունը (տես վերը՝ կետ 15), դիմողի դատապաշտպանը որոշակիորեն չի կրկնել պաշտպանություն իրականացնելու վերաբերյալ իր խնդրանքը՝ այնպես, ինչպես որ նա պետք է ամեր Նիդեռլանդների քրեական դատավարական նորմերի կանոնների համաձայն (տես վերը՝ կետեր 15, 20 և 28): Հիմնվելով Գերագույն դատարանի 1993թ. նոյեմբերի 30-ի դատավճռի վրա (տես վերը՝ կետ 27)՝ Կառավարությունը պնդել է, որ եթե դատապաշտպանն այդպես վարվեր. արդարացի հնարավորություն կլիներ, և իր խնդրանքը վերջիվերջո կբավարարվեր:

Այնուհետև Կառավարությունը պնդել է, որ Գերագույն դատարանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ բացակա հայտարարված մեղադրյալն իրավունք չունի իր պաշտպանությունն իրականացնելու դատապաշտպանի միջոցով, քանի դեռ չկան իր բացակայությունը պարտադրող պատճառներ (տես վերը՝ կետ 26), նպատակաուղղված է նրան, որ քրեական հանցագործության մեջ մեղադրվողներին հետ պահի դատավարությանը չներկայանալուց: Նրանք շեշտել են մեղադրյալի ներկայության կարևորությունը: Համակարգը, իրենց կարծիքով, լիովին հավասարակշռված է և համատեղելի է 6-րդ հոդվածի 1-ին և 3(c) կետերի հետ: Վերջին դրույթը ոչ մի դեպքում չի նշանակում, որ ի հակադրումն ներպետական օրենսդրության՝ գործին առնչվող դրույթների, մեղադրյալը միշտ էլ իրավունք ունի

բացակայելու դատավարությունից, քանի դեռ իր դատապաշտպանն իրականացնում է պաշտպանությունը:

37. Դատարանը նախ և առաջ նկատում է, որ սույն գործը չի վերաբերում այն հարցին, թե արդյո՞ք դիմողի համար վտանգված շահի լրջությունը նկատի ունենալով՝ մեղադրյալի բացակայությամբ դատավարության իրականացումը համատեղելի է 6-րդ հոդվածի 1-ին և 3 (c) կետերի հետ. դիմողի գանգատն այն մասին չէ, որ վերաքննիչ բողոքը լավել է իր բացակայությամբ, այլ այն, որ վերաքննիչ դատարանը գործը վճռել է առանց իր դատապաշտպանի, ուն նա լիազորել էր իրականացնելու իր պաշտպանությունը, և որը մասնակցել էր դատավարությանը՝ նման հստակ մտադրությամբ, թույլտվություն ունենալով պաշտպանելու նրան: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել դիմողի համար վտանգված շահի կարևորությունը:

38. Ի լրումն՝ Դատարանը նկատում է, որ ինչպես Պոյտրիմուլի գործը, ներկա գործը նույնպես վերաբերում է վերաքննության միջոցով քրեական բողոքարկմանը, որը ներպետական օրենսդրության համաձայն այն վերջին ատյանն է, որտեղ գործը կարող է ամբողջությամբ քննության առնվել՝ և՛ փաստերի, և՛ իրավունքի հարցերի առնչությամբ:

39. Ներկա գործը որոշ առումներով տարբերվում է Պոյտրիմուլի գործից. կարևոր տարբերություններից մեկն այն է, որ Նիդեռլանդների օրենսդրության համաձայն՝ մեղադրյալը, որպես կանոն, պարտավորված չէ ներկա լինելու իր դատավարությանը, այդ կանոնի բացառությունը էական չէ ներկա համատեքստում (տես վերը՝ կետ 21):

Համապատասխանաբար, երբ Նիդեռլանդների գերագույն դատարանը որոշել է, որ այն մեղադրյալը, որը հայտարարվել է բացակայող, իրավունք չունի պաշտպանությունն իրականացնելու դատապաշտպանի միջոցով, քանի դեռ ի հայտ չեն եկել նրա բացակայության համոզիչ պատճառներ. այն չի առաջարկել, որ այս դոկտրինան նպատակաուղղված է եղել մեղադրյալների չհիմնավորված բացակայությունը կանխելուն, այլ այն հիմնավորել է, զոնե սկզբնապես, Քրեական դատավարության օրենսգրքի նախագծման պատմությամբ (տես վերը՝ կետեր 24 և 26):

40. Խնդրո առարկա նախադեպային իրավունքը, ինչպես փաստարկել է Կառավարությունը, հասկանալի կլինի վերը նշված նպատակին ծառայելու համար, որովհետև, ինչպես նշել է այս Դատարանն իր՝ Պոյտրիմուլի վճռում (loc. cit., էջ 15, կետ 35), արդար և անաչառ քրեական դատավարության շահերից ելնելով՝ չափազանց կարևոր է, որ մեղադրյալը ներկա գտնվի դատավարությանը: Որպես ընդհանուր կանոն սա հավասարապես իրատեսական է վերաքննության համար: Այնուամենայնիվ, քրեական արդարադատության համակարգի անաչառության համար նաև չափազանց կարևոր է, որ մեղադրյալն ըստ հավուր պատշաճի պաշտպանվի ինչպես առաջին, այնպես էլ վերաքննիչ ատյանում, առավել ևս՝ վերջինիս դեպքում, քանի որ, ըստ Նիդեռլանդական իրավունքի, առարկություն չի կարող ներկայացվել վերաքննիչ բողոքի հիման վրա՝ մեղադրյալի բացակայությամբ կայացված դատավճռի դեմ:

Դատարանի տեսանկյունից՝ վերջին շահը գերակշռում է: Հետևաբար, այն փաստը, որ մեղադրյալը, չնայած լինելով պատշաճորեն ծանուցված, չի ներկայանում, չի կարող, նույնիսկ հիմնավոր պատճառի բացակայության դեպքում, արդարացնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ դատապաշտպանի միջոցով իր պաշտպանությունը կազմակերպելու իրավունքից նրան զրկելը:

41. Դատարանը նաև չի կարող ընդունել Կառավարության փաստարկն այն մասին, որ դիմողը չի կարող պահանջել իրեն համարել զոհ՝ նշված դրույթների համաձայն իր իրավունքները ոտնահարելու առումով, որովհետև իր դատապաշտպանը, Նիդեռլանդների քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթի համաձայն, չի խնդրել դատարանի թույլտվությունը՝ պաշտպանելու մեղադրյալին (տես վերը՝ կետ 28): Ցանկացած անձ, ով մեղադրվում է քրեական հանցանք կատարելու համար, ունի դատապաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունք: Որպեսզի այս իրավունքը լինի գործունև և արդյունավետ, այլ ոչ զուտ տեսական, դրա կիրառումը չպետք է կախված լինի անպատշաճ ձևական պայմանների կատարումից. դատարանները պետք է ապահովեն, որ դատավարությունը լինի արդար և, համապատասխանաբար, այն դատապաշտպանին, որը դատավարությանը ներկայանում է մեղադրյալի բացակայությամբ նրան պաշտպանելու ակնհայտ նպատակով, հնարավորություն տրվի այն նշված իրականացնելու:

42. Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 6-րդ հոդվածի 3(c) կետի՝ միասին վերցրած, խախտում:

#### I. 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

43. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն,

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

Դիմողը ծախսերի ու ծախքերի վերաբերյալ որևէ պահանջ չի ներկայացրել:

Նա, այնուամենայնիվ, առաջարկել է, որ Կառավարությունն ի կատար չածի 9 տարվա ազատազրկման դատապարտումը, որը որոշել էր Վերաքննիչ դատարանը, և իր անունը հանի փնտրվող անձանց միջազգային ցուցակից: Այնուամենայնիվ, սա չի կարող նշանակել *restitutio in integrum*, քանի որ նա 6 ամիս եղել է նախնական կալանքի տակ, անկարող է եղել հեռանալ Մաուրիթիայից և նրա աշխատանքային գործունեությունը խափանվել է: Այդ իսկ պատճառով նա առաջարկել է, որ պետք է ապահովվի իր «ֆինանսական բավարարումը՝ տարեկան 30000 NLG-ի չափով, սկսած 1988թ. փետրվարի 8-ից»:

Կառավարությունը ժխտել է, որ դիմողը որևէ վնաս է կրել: Հանձնաժողովը ողջամիտ է համարել պահանջել Նիդեռլանդների Կառավարությունից ի կատար չածել պատիժը՝ առանց, նախ և առաջ, դիմողին հնարավորություն տալու՝ պաշտպանել իր գործը, բայց ֆինանսական փոխհատուցման հարցը կախված կլինի Նիդեռլանդներում գործի հետագա դատական քննությունից:

44. Դատարանը հիշեցնում է, որ ինքը որևէ իրավասություն չունի ցուցում տալու Կառավարությանը՝ նորոգելու վարույթը (տես, որպես վերջին աղբյուր, Սաիդին ընդդեմ Ֆրանսիայի 1993թ. սեպտեմբերի 20-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 261-Շ, կետ 57, էջ 46), հետևապես, Դատարանը չի պաշտպանում Հանձնաժողովի առաջարկը:

Ինչ վերաբերում է դիմողի՝ փոխհատուցման պահանջին, գործի բոլոր հանգամանքները հաշվի առնելով, Դատարանը կարծում է, որ խախտման

փաստի ճանաչումն ինքնին արդարացի բավարարում է դիմողի ստացած հնարավոր ոչ նյութական վնասի փոխհատուցման համար:

**ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ**

1. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3(c) կետի հետ համատեղ:
2. Վճռում է, որ վերը նշված խախտման բացահայտումն ինքնին պատշաճ և արդարացի բավարարում է:
3. Մերժում է արդարացի բավարարման մասին պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակվել է Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1994թ. սեպտեմբերի 22-ին:

Ստորագրել է՝ Ռիսդալ	Հերբերտ Պետցոլդ Գործող քարտուղար	Ստորագրել է՝ Նախագահ	Ռոլվ
------------------------	-------------------------------------	-------------------------	------

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում է պրն Ռիսդալի համընկնող կարծիքը, որին միացել է պրն Միֆսուդ Բոնիչին:

**ԴԱՏԱՎՈՐ ՌԻՍԴԱԼԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ, ՈՐԻՆ ՄԻԱՑԵԼ Ե ԴԱՏԱՎՈՐ ՄԻՖՍՈՒԴ ԲՈՆԻՉԻՆ**

Իր վճռում Դատարանը մի շարք մեջբերումներ է արել Պոյտրիմոլն ընդդեմ Ֆրանսիայի 1993թ. նոյեմբերի 23-ի վճռից. Շարքեր Ա, թիվ 277-A: Այդ գործի վերաբերյալ ես չհամընկնող կարծիք եմ ունեցել և Կոնվենցիայի ոչ մի խախտում չեմ հայտնաբերել: Ներկա գործը, այնուամենայնիվ, որոշ առումներով տարբերվում է Պոյտրիմոլի գործից և, ըստ իս պետք է զանազանվի այդ գործից:

Ես համաձայն եմ, որ քրեական արդարադատության արդարացիության համար կարևոր է, որ մեղադրյալը համապատասխանաբար պաշտպանվի և՛ առաջին աստիճանի, և՛ վերաքննիչ դատարաններում: Այնուհետև ես համաձայնել եմ, որ դատարանները պետք է ապահովեն, որ դատավարությունը լինի արդար, և որ ներկա գտնվող դատապաշտպանին հնարավորություն տրվի պաշտպանելու մեղադրյալին՝ վերջինիս բացակայության պայմաններում:

Ներկա գործում մեղադրյալը դատապարտվել է շատ լուրջ հանցանքի համար, և դատապարտվել է 9 տարի ազատազրկման: Քանի որ Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 6-րդ հոդվածի 3(c) կետերի՝ միասին վերցրած, խախտում, այնուամենայնիվ, այս գործում անհրաժեշտություն չկա որոշել, արդյո՞ք, և ինչ պայմաններում մեղադրյալը կարող է հրաժարվել դատավարությանը ներկայանալու իր իրավունքից (տես Կոլոզան ընդդեմ Իտալիայի 1985թ. փետրվարի 12-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 89, էջ 14, կետ 28, և Ֆ.Ս.Բ.-ն ընդդեմ Իտալիայի 1991թ. օգոստոսի 28-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 208-B, էջ 21, կետ 33):

